Կարծիք

Նազելի Գառնիկի Սուքիասյանի «Ֆինանսական պատասխանատվության իրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» ԺԲ.00.02 – Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ֆինանսական պատասխանատվության արդիականությունը ՀՀ-ում պայմանավորված է անկախության հռչակումից հետո կատարված իրավական բարեփոխումներից մեկի՝ իրավաբանական պատասխանատվության հայեցակարգային դրույթների ժամանակի պահանջներին համահունչ մշակումը, որի անբաժան մասն են կազմում ֆինանսական պատասխանատվության և վարույթի իրավական կարգավորման հիմնախնդիրը:

Ժամանակակից շուկայական տնտեսվարման պայմաններում պետության ֆինանսական գործունեության ծավալները աննախադեպ ընդլայնվում են կապված ֆինանսական ներուժի շարժի պետական բյուջեի եկամուտների և ծախսերի անհամեմատ աճի, դրանց ինչպես հավաքագրման, այնպես էլ ծախսերի իրականացման ձևերի փոփոխության բյուջետային կարգավորման մեթոդներից օգտվող սուբյեկտների շրջանակների ընդլայնման արտարժույթի գործառնությունների ծավալների մեծացման, բանկային վարկավորման ոլորտների ընդլայնման, հարկային քաղաքականության և առանձին հարկատեսակների դինամիկ փոփոխությունների, ինչպես նաև ֆինանսական համակարգի մյուս օղակների գործունեության լայնամասշտաբ գործածության հետ:

Շուկայական տնտեսվարման անկատարությունը, ինչպես նաև պետության ֆինանսատնտեսական գործունեությունը կարգավորող հենքային միասնական օրենսդրության բացակայությունը այսօր բացասաբար են անդրադառնում համապետական և տեսական կենտրոնական դրամական ֆոնդերի ձևավորման վրա:

Ֆինանսական համակարգի տարբեր օղակներում թե՛ ֆիզիկական և թե՛ իրավաբանական անձինք հաճախակի խախտում են ֆինանսական պարտա-

վորությունները: Խախտվում են պետական և համայնքային բյուջեների եկամուտների հավաքագրման ժամկետները, հարկերը և պարտադիր այլ վճարները պատշաճ չեն վճարվում: Առավել անհուսալի է վիճակը բյուջետային և պետական սոցիալական ապահովության համապետական ծախսերի իրացման ոլորտում: Որպես կանոն, բյուջետային նպատակային ֆինանսավորման ծախսերը հեռու են նպատակային լինելուց (դոտացիա, սուբվենցիա, սուբսիդիա):

ՀՀ ֆինանսական գործունեությունը վերահսկող մարմինների պաշտոնական հրապարակումների ուսումնասիրությունների արդյունքների գիտական վերլուծությունները հուշում են, որ այս ոլորտում անտեսված են համապետական ֆինանսական վերահսկողությունը և հսկողության անհրաժեշտությունը, ֆինանսական կարգապահության տարրական պահանջները, որոնք կենտրոնացված դրամական ֆոնդերը իրացնելիս, օրինականության շրջանցման պատճառով, ինչպես արձանագրված էր նախկին ՀՀ վերահսկիչ պալատի նախագահի զեկուցման մեջ, տեղիք են տալիս «զարհուրելի» ֆինանսական իրավախախտումների:

Ուսումնասիրությունները վկայում են, որ ֆինանսական գործունեությունը կարգավորող միասնական օրենսդրության (բյուջետային, հարկային օրենսգրքերի) բացակայությունը, առավել ևս գործող իրավական ակտերում ֆինանսական պատասխանատվության և վարույթի սահմանման և կիրառման կարգի շրջանցումները՝ լինեն գիտակցված թե անտեղյակության կամ մասնագիտական գիտելիքների ցածր մակարդակի արդյունք, այնուամենայնիվ, պետության ֆինանսական գործունեության ցանկացած ոլորտում իրենց զգացնել են տալիս, քանի որ ֆինանսական համակարգի յուրաքանչյուր ֆոնդ ունի համապետական, ազգային ֆինանսատնտեսական հզորության ամրապնդման նպատակ, որոնց հասցված վնասը անհնար է լուծել միայն վարչական կամ քրեական ներգործության միջոցներով, քանի որ վերջիններս հանդես են գալիս անհատական կոնկրետ այս կամ այն անձի կողմից հասցված վնասի վերականգնմամբ և ինչպես ցույց է տալիս գործնական կյանքը պետությանը հասցված վնասները վերականգնվում են մասամբ վերջիններիս միջոցների հաշվին, մինչդեռ ֆինանսական պատասխանատվությունն ուղղված է ոչ միայն ֆիզիկական անձանց, այլև կազմակերպություններին, որի նպատակը հասցված վնասի լրիվ վերականգնումն է:

Ավելին, ֆինանսական պատասխանատվության, որպես պատասխանատվության առանձին տեսակի, դերի և նշանակության անտեսման պատճառով ֆինանսական գործունեության տարբեր ոլորտներում թողտվության և հանցավոր ինքնավստահության հետևանքով օր-օրի ավելանում են պետական բյուջեից կատարվող հափշտակությունները, ծնելով իրենց բնույթով նոր «բյուջետային» հանցագործություններ:

Իրավախախտումները վկայում են ֆինանսական օրենսդրության բացթողումների, ինչպես նաև դրա կիրառման անկայունության մասին, որոնց պատճառով այսօր ընդլայնվում է ֆինանսական իրավախախտումների աշխարհագրությունը, աճում է իրավախախտների թվաքանակը, օրակարգային է դառնում ֆինանսական պատասխանատվության և վարույթի իրավական կարգավորման հիմնախնդիրների տեսական և օրենսդրական մշակման և կյանքի կոչելու անհրաժեշտությունը: Հետևաբար, ֆինանսական պատասխանատվության և վարույթի իրավական հիմնախնդիրների գիտական հետազոտություններին ուղղված ցանկացած փորձ անկախ ուսումնասիրությունների որակից և մակարդակից, եթե այն ուղղված է ֆինանսական իրավունքի տեսության և ֆինանսական օրենսդրության ժամանակակից պահանջներին համապատասխան մշակմանը, հիմնախնդիրը ձեռք է բերում հասարակական և պետական լուրջ կարևորություն, որի իրավական կարգավորման արդյունավետ լուծումները մեծ ավանդ են հայրենական իրավագիտության և ՀՀ ԱԺ ապագա իրավաստեղծ գործունեության համար:

Ուսումնասիրությունները վկայում են, որ հայրենական իրավագիտության ոլորտում ֆինանսաիրավական պատասխանատվության և վարույթի հիմնախնդիրները դուրս են մանցել հայ իրավագետների ուշադրությունից, հատկապես, անտեսված է ֆինանսաիրավական պատասխանատվությանը և վարույթի իրավական կարգավորմանն ուղղված ֆիտական հետազոտությունների անհրաժեշտությունը: ՀՀ-ում ֆինանսական իրավունքի ֆիտության և ճյուղի զարգացման շահագրգռվածությունը ինքնին արդիական են դարձնում ֆինանսաիրավական ցանկացած ինստիտուտի ուսումնասիրությունը և գիտական հետազոտությունները, որոնք հայրենական ֆինանսաիրավական գիտության համար այսօր կարող են առանցքային հայտնության նշանակություն ձեռք բերել:

Համաշխարհային տնտեսական ցնցումների և ճգնաժամերի պարբերականությունը, դրանց կրկնությունների հաճախականությունը, ինչպես ճիշտ նշում է ատենախոսության հեղինակը, օրվա հրամայական են դարձնում ֆինանսահիրավական սանկցիաների սահմանման և հարկադրանքի կիրառման անհրաժեշտությունը, որոնք ինչպես ներպետական, այնպես էլ պետությունների արտաքին տնտեսական համագործակցության ոլորտների ֆինանսական պարտավորությունների կատարումն ապահովող ժամանակակից իրավական լավագույն միջոցներ են, առանց որոնց կիրառման անհնար է ապահովել կենտրոնացված, ինչպես նաև համայնքների բյուջեների համալրման նպատակով դրամական միջոցների հավաքման, բաշխման և վերաբաշխման գործընթացը:

Հանրապետության տնտեսական անվտանգության ապահովմանը բավարար մակարդակով չեն նպաստում գործող բանկային համակարգը, արժեթղթերի շուկան, ինչպես նաև արտարժույթային ոլորտի իրավական կարգավորմանն ուղղված օրենսդրական ակտերը, որոնք ֆինանսական իրավախախտումների, հատկապես, պատասխանատվության, վարույթի, ֆինանսական ներգործության միջոցների գործուն համակարգ չեն սահմանում, որի պատճառով պետության ֆինանսական համակարգի բոլոր ոլորտներում օր-օրի ավելանում են ֆինանսական իրավախախտումները, հրատապ դարձնելով ֆինանսահիրավական պատասխանատվության և վարույթի կարգավորմանն ուղղված իրավական կառուցողական միջոցառումների շուտափույթ իրականացման անհրաժեշտությունը որոնք անտեսված են ինչպես ֆինանսական իրավունքի գիտության, ·այնպես էլ ՀՀ օրենսդիր-իրավաստեղծ գործունեության ոլորտում:

ՀՀ ֆինանսական գործունեության հիշատակված բոլոր ոլորտները զուրկ են միասնական, կոդիֆիկացված ֆինանսական պատասխանատվություն սահմանող օրենսդրությունից, որի բացակայությունը ցնցող իրավախախտումներ է արձանագրում ՀՀ ֆինանսական համակարգի ցանկացած ոլորտում: Առավել անմխիթարական է ֆինանսական իրավունքի հայրենական գիտություն է, որտեղ, ի թիվս ֆինանսահիրավական շատ ինստիտուտների, մոռացված է ֆինանսահիրավական պատասխանատվության և վարույթի հիմնախնդիրների հետազոտությունները, գիտական վերլուծությունների ցանկությունը, որպիսի պահանջները հրատապ են

դարձնում ֆինանսահիրավական, պատասխանատվության և վարույթի իրավական կարգավորման հիմնախնդիրների թեմայի արդիականությունը:

Ատենախոսության թեմայի ընտրությունը և դրա արդիականության հիմնախնդիրների համար վերը հիշատակված փաստարկները ինքնին վկայում են, թե օբյեկտիվորեն որքան մեծարժեք է ժամանակակից իրավունքի տեսության ոլորտում ֆինանսահիրավական պատասխանատվության և հարակդրանքի իրավական բնույթի և իրավաբանական պատասխանատվության համակարգում վերջինիս որպես պատասխանատվության նոր և ինքնուրույն տեսակի ճանաչման հիմնախնդիրների գիտական հետազոտությունն, ինչպես նաև այն նոր ուղիների փնտրտուքը, որը կնպաստի պետության ֆինանսական գործունեության կատարելագործմանը հանրային ֆինանսների իրավական կարգավորման ոլորտում հարկադրանքի և պատասխանատվության արդյունավետ նոր միջոցների կիրառմամբ:

Ներկա դրությամբ հայրենական ֆինանսահիրավական գիտության ոլորտում ֆինանսահիրավական հարկադրանքի պատասխանատվության, ինչպես նաև ֆինանսական իրավախախտումներին գործերով վարույթի հիմնախնդիրների, դրանց բովանդակության, իրացման, ներգործության տեսակների և միջոցների ուսումնասիրությանն ուղղված համալիր գիտական հետազոտություններ չկան, որոնք հնարավորություն կընձեռեին ճիշտ հասկանալ և գնահատել ֆինանսահիրավական պատասխանատվության և վարույթի նշանակությունը պետության կյանքում, բացահայտելով ֆինանսական գործընթացների և գործող ֆինանսական հարաբերությունների փոխհարաբերակցությունը և փոխներգործությունը ապահովելով ֆինանսահիրավական պատասխանատվության և իրավախախտների գործերով վարույթի հարկադիր գործընթացների կիրառման անհրաժեշտությունը՝ հանրային ֆինանսների և վերահսկողության իրականացման բնագավառում:

Անդրադառնալով Ն. Սուքիասյանի դոկտորական ատենախոսության կառուցվածքին, նյութի բացահայտման ժամանակակից իրավագիտական մեթոդոլոգիական հնարքների կիրառման յուրահատկություններին, դրականապես արձագանքելով պետք է փաստեմ, որ հեղինակը գիտական բծախնդրությամբ աշխատանքի որակը պատշաճ բարձրության վրա պահելու նպատակով կիրառել է ֆինանսական իրավախախտների, դրա անբաժան մասը կազմող հարկադրանքի, սանկցիաների,

վարույթի հիմնախնդիրների հետազոտման դիալեկտիկական, իրավահամեմատական, կառուցվածքային-գործառութային, ինչպես նաև տնտեսագիտությանը հայտնի մասնավոր ճյուղերի այնպիսի մեթոդների օգտագործման, ինչպիսիք են վիճակագրական, հաշվառման և վերլուծական մեթոդները:

Նկատենք, որ գիտական աշխատանքում խստորոշ պահպանված են ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի այն բոլոր ցուցումները և պահանջները, որոնք ներկայացված են գիտահետազոտական աշխատանքների կառուցվածքին, շարադրման կարգին, ձևին և այլ պահանջների պահպանմանը:

Ատենախոսության հիմնախնդրի արդիականությունը հեղինակին հուշել է գիտական հետազոտության արժանի այն ֆինանսահիրավական ինստիտուտների բացահայտումները, որոնց առանցքային հարցերի լուսաբանումները կազմում են աշխատանքի կառուցվածքի և գիտական ապարատի հիմքը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը ամփոփված են չորս գլուխների շրջանակներում, որոնցում ներառված են տասնհինգ պարագրաֆներ: Գիտական հետազոտությունների արդյունքները ներկայացված են եզրակացություններով և առաջարկություններով, որոնց գիտական բազան հանդիսանում են առանձին հեղինակների 223 անուն գիտական հրապարակումները և շուրջ 62 նորմատիվ և ենթաօրենսդրական ակտեր:

Աշխատանքն ունի ինքնատիպ ներածություն: Ատենախոսությունը ունի 386 էջ ծավալ:

Անդրադառնալով աշխատանքի բովանդակային գնահատականին, նկատենք, որ գիտական թեզի թեման ինքնին ֆինանսահիրավական պատասխանատվության ոլորտին առնչվող նյութական և գործընթացային իրավական ինստիտուտներին վերաբերող բացահայտումներ են, նոր ֆինանսահիրավական հայեցակարգեր, որոնք առաջին անգամ իրավագիտության ոլորտում առաջ են քաշվել աշխատանքի հեղինակի կողմից, որոնք ուղղված են պետության ֆինանսական գործունեության ոլորտում համոզման և հարկադրանքի մեթոդների, ֆինանսահիրավական սանկցիաների, ֆինանսական հարկադրանքի տեսակների, ֆինանսահիրավական խնդիրների և պատասխանատվության, առավել ևս ֆինանսական իրավախախտների գործերի վարույթի, դրա կառուցվածքի, խնդիրների, փուլերի, ինչպես նաև վարույթի ըն-

թացքում կիրառվող վարույթային հարկադրանքի միջոցների կիրառմանը, որոնք ըստ էության կարող են հիմք հանդիսանալ և կողմնորոշել ապագայում ֆինանսա-իրավական պատասխանատվության և վարույթի նոր օրենսդրության ձևավորման համար:

Դոկտորական ատենախոսության առանցքը կազմում են հրապարակային պաշտպանության ներկայացված թվով տասներկու գիտական նորույթներ, որոնցից յուրաքանչյուրի հիմնավորման համար աշխատանքում իրավունքի տարբեր ճյուղերի տեսության և օրենսդրական նյութերի համեմատական վերլուծությունների հիման վրա միանգամայն հիմնավոր և համոզեցուցիչ ընդգծված են հեղինակային սահմանումներ, որոնց անհրաժեշտությունը հույժ կարևոր է ֆինանսական իրավունքի գիտության հարցման համար: Այսպես, գործող վարչական և հարկային օրենսդրության բազմաթիվ հասկացությունների բացահայտման նպատակով հեղինակը աշխատանքի 165-166-րդ էջերում անդրադարձ է կատարել ՀՀ սահմանադրական դատարանի 2014թ. փետրվարի 18-ի թիվ ՍԴՈ-1139 որոշման պարզաբանումներին, որտեղ սահմանադրական դատարանը գտնում է, որ հարկային, ինչպես նաև վարչական հարաբերություններում նույն սուբյեկտները կարող են հանդես գալ թե՛ որպես հարկային և թե՛ վարչական իրավական հարաբերությունների սուբյեկտներ և դրանց նկատմամբ կարող է կիրառվել հարկային և վարչական պատասխանատվության միջոցներ, հեղինակը այն միտքն է զարգացնում, որ նման մոտեցումը անհարիր է իրավաբանական պատասխանա-տվության կիրառման հայեցակարգային դրույթների, քանի որ նման թողտվությունը տեղիք է տալիս մարդու իրավունքների լուրջ խախտումների, ծնելով միևնույն իրավախախտման համար «կրկնակի» պատասխանատվություն: Խոսքը վերաբե-րում է ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 169[1], 170[3] և մի շարք այլ հոդվածների, որոնք ուղղված են հարկային իրավախախտումների այն դեպքում, երբ ՀՀ «Հարկային օրենսգրքի» 401, 402 հոդվածներով (հարկերը սահմանված ժամկետներում չվճարելը) նույն իրա-վախախտումների համար պատասխանատվություն է սահմանված: Կամ ֆինան-սական իրավունքի գիտության ոլորտում տեսական անգնահատելի բացահայտում է «ֆինանսահիրավական գործունակություն» հիմնախնդիրը, որը ֆինանսահիրավական պատասխանատվության գործնական կիրառումը բարդացնում է, քանի որ

ֆինանսահիրավական, հատկապես հարկային օրենսդրությամբ սահմանված չէ գործունակության տարիքային սահմանումը, հետևաբար, լուրջ դժվարություններ են առաջանում ֆիզիկական անձանց նկատմամբ (օտարերկրյա, քաղաքացիություն չունեցող) պատասխանատվություն սահմանելիս հարկերը, որոնք անմիջապես կապվում են լրիվ կամ սահմանափակ գործունակության, առավել ևս իրավախախտման դեպքում «սուբյեկտիվ կողմի» բնութագրման խնդիրները լուծելիս (տե՛ս ատենախոսության էջ 248-251):

Ն. Սուքիասյանը «Ֆինանսական պատասխանատվության իրավական հիմնախնդիրները ՀՀ-ում» ատենախոսության ժամանակակից իրավական հայեցակարգային դրույթների մշակման գործընթացում որպես նորույթ գիտական լուրջ հետազոտում է «ֆինանսական իրավախախտների գործերի վարույթի» բացահայտումները, որով հայրենական ֆինանսական իրավունքի գիտության ոլորտում առաջին անգամ պաշտպանության է ներկայացվում ֆինանսական իրավունքի գործընթացին վերաբերող ընդարձակ օրենսդրական նախագծումների մոդել, որը ըստ էության իրավական գործերով վարույթի օրենսդրական նախագիծ է, որտեղ վարույթային իրավունքի ճյուղերի ընդհանուր իրավաչափությունների բարեփոխումների հիման վրա հեղինակային է ֆինանսական իրավախախտումների վարույթի հասկացությունը, խնդիրները, վարույթի հրավական հիմքերի, սկզբունքների, փուլերի, վարույթում կիրառվող հարկադրանքի միջոցների, ինչպես նաև ընդունված վարույթային ակտերի կատարողական ընթացակարգերը:

Դոկտորական ատենախոսությունը զերծ չէ թերություններից, բացթողումներից, լեզվական և ոճական անճշտություններից, ինչպես նաև տեսական և գործնական դիրքորոշումների հասկացություններից:

1) Այսպես, ատենախոսության առաջին գլխի չորրորդ պարագրաֆը, որը շարադրված է 68-96-րդ էջերում կրում է «Օրինականության և ֆինանսական կարգապահության սկզբունքների դրսևորման իրավական առանձնահատկությունները պետության ֆինանսական գործունեության ոլորտում» վերտառությունը, որը այսօր ՀՀ ֆինանսատնտեսական բարեփոխումների իրականացման իրավական հիմնարար երաշխիքներից մեկն է, որի բացահայտումները կարծում եմ պետք է լուսաբանվեր օրենքի և իրավունքի գերակայության սկզբունքային պահանջներին

համահունչ:

2) Դոկտորական ատենախոսության առաջին գլխի չորրորդ պարագրաֆում հեղինակը ժամանակակից իրավագիտական հայեցակարգերին համահունչ բացահայտել է «Օրինականության և ֆինանսական կարգապահության սկզբունքների տեղը և դերը, գործնական դրսևորման իրավական առանձնահատկությունները պետության ֆինանսական գործունեության ոլորտում», որի բացահայտումներին նվիրված է աշխատանքի 68-96 էջերը:

3) Ատենախոսության երկրորդ գլխի երրորդ պարագրաֆի 138-րդ էջից մինչև 179-րդ էջերում հեղինակը հետազոտման ճանապարհով բացահայտել է ֆինանսաիրավական սանկցիաների հասկացության, համակարգի և կատարելագործման հիմնախնդիրները, փորձելով վերջիններս իրենց առանձնահատկություններով սահմանազատել իրավունքի այլ ճյուղերի՝ քրեական, վարչական, քաղաքացիաիրավական, ինչպես նաև կարգապահական պատասխանատվություն ունեցող սանկցիաներից: Ընդգծելով ֆինանսաիրավական սանկցիաների համակարգը, որտեղ հատկապես «տուգանքը», որը մի քանի իրավունքի ճյուղերում կիրառվում է թե՛ որպես հիմնական և թե՛ որպես լրացուցիչ ներգործություն (պատժամիջոց) մակերեսորեն է պարզաբանված, այն դեպքում, երբ աշխատանքի 166-րդ էջից մինչև 173-րդ էջերում մանրազնին բացահայտված են ֆինանսական իրավունք սանկցիաների տարբերությունները իրավունքի այլ ճյուղերի սանկցիաներից:

4) Դոկտորական ատենախոսությունում ֆինանսական իրավախախտումների և պատասխանատվության կիրառման հիմքերը լուսաբանելիս հեղինակը առանձնակի ուշադրություն է դարձրել «մեղքի» որպես իրավաբանական պատասխանատվության կիրառման հիմքի հիմնախնդիրների բացահայտումները, սահմանազատելով «առանց մեղքի» և «մեղքի» դրսևորմամբ կատարված իրավախախտների ֆինանսաիրավական պատասխանատվության առանձնահատկություններին, որտեղ իրավաբանական անձանց ֆինանսաիրավական պատասխանատվության առաջարկված հայեցակարգում դրույթները վիճարկելի են, քանի որ հեղինակը առաջարկում է վերջիններիս նկատմամբ կիրառել միայն ֆինանսաիրավական պատասխանատվություն, քանի որ վարչական գործող օրենսգրքի մի շարք դրույթներ բացառում, անհնար են դարձնում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվու-

թյան հնարավորությունները (աշխատանքի 168 էջ, 175 էջ, 254-257 էջեր, 260-262 էջեր):

5) Ատենախոսության վերջին՝ չորրորդ գլխի երրորդ պարագրաֆը նվիրված է ֆինանսական իրավախախտումների գործերի վարույթի իրավական հիմքերի և փուլերի իրավական կարգավորումների բացահայտումներին, որտեղ (աշխատանքի 312 էջ) հեղինակը վարույթի փուլերը դասակարգելիս, որպես ֆինանսական իրավախախտումների վարույթի առաջին փուլ ընդգծում է «մինչվարույթում կամ ֆինանսական վեճերի կամ բողոքների քննարկումը», և առաջարկում է ֆինանսական վարույթի իրավակարգավորումներին ուղղված ապագա իրավական ակտերը (բյուջետային, բանկային, հարկային) այն պարտադիր քննարկել որպես ֆինանսական իրավախախտման վարույթի առաջին փուլ:

Կարծում եմ այս դիրքորոշումը նույնպես վիճելի է, քանի որ գործող ՀՀ հարկային օրենսգրքի 20-րդ բաժնում ամրագրված է «հարկային ծառայողի գործողությունների կամ անգործության բողոքարկման» կարգը, որն ըստ էության ներառում է հեղինակի կողմից արված առաջարկը:

Ճիշտ համարելով հեղինակի բազմաբովանդակ բացահայտումները, որոնք ուղղված են հիմնախնդրի բովանդակության այնպիսի բաղադրիչների բացահայտումներին, ինչպիսիք են օրինականության ապահովման իրավական և ոչ իրավական երաշխիքները, որոնք օբյեկտիվորեն ձևավորված սոցիալական, տնտեսական, գաղափարախոսական և քաղաքական պայմաններ են ուղղակի կամ անուղղակի ազդեցություն են թողնում ֆինանսական իրավունքի ձևավորման և կիրառման գործընթացների վրա, կարելի է համերաշխել հեղինակի այն դիրքորոշմանը, որ պետության ֆինանսական գործունեության ոլորտի իրավակարգավորումներին ուղղված ինչպես նորմատիվ, այնպես էլ ենթաօրենսդրական որևէ ակտում փորձ չի կատարվել օրենքի մաս կատարելով սահմանել «ֆինանսական վերահսկողություն» և «ֆինանսական հսկողություն» հասկացությունները: Այնուամենայնիվ կարծում եմ, ելնելով ֆինանսական պատասխանատվության և վարույթի հիմնախնդրի նպատակներից անհրաժեշտ է ավելի խորը սահմանազատել հիշյալ ֆինանսահիրավական եզրույթները: Այնուհետև, հիմնախնդրի «բացահայտումներում» ես այն կարծիքին եմ, որ «ընդհանուր հսկողությունը» չպետք է սահմանազատել

«վարչական հսկողությունից»: Առավել ևս պնդել, որ վարչական հսկողության դեպքում չեն կարող անմիջականորեն վերացվել հսկողության ենթակա օբյեկտի օրենքին հակասող ակտերը:

6) Ատենախոսության մի շարք էջերում նկատվել է ոճական բնույթի թերություններ, օրինակ, 34-րդ էջում նշվում է «պետության ֆինանսական գործունեության ոլորտը փողի իշխանության միջամտությունը որոշակի սահմաններ ունի», կամ նույն էջում արձանագրված է «... հարկերը, տուրքերը, այսօր իրոք դրամական արտահայտությամբ ցուցադրում են պետության, որպես հասարակության երևույթի ֆինանսական իշխանություն»:

Հեղինակի ուշադրությունից վրիպել են ուղղագրական, կետադրական բացթողումներ, ոչ ճիշտ օգտագործված արտահայտություններ, օրինակ, էջ 85 «կենսական դերը», «նպատակահար բարձրացված ծախսեր», կամ 206 «իրավական անձի կառուցվածք», 244 էջում «խոչընդոտել», կետադրական բացթողումներ են նկատվում 181, 220, 229, 260, 267-րդ էջերում:

Նկատված թերությունները էական չեն, չեն նսեմացնում դոկտորական ատենախոսության գիտական արժեքները:

Ատենախոսության առանցքային դրույթները արտացոլված են հեղինակի ռուսերեն լեզվով 2017թ. հրատարակած "Правовые проблемы финансовой ответственности в Республике Армения" մենագիր աշխատությունում և 25 գիտական հոդվածներում, որոնք հրատարակվել են Ուկրաինայի և ՌԴ տարբեր գրախոսվող գիտական ամսագրերում:

Դոկտորական ատենախոսության հիմնախնդիրները ափոփված են հեղինակի կողմից հրապարակված վեց ուսումնական ձեռնարկներում:

Հիշատակված գիտական հոդվածները և մենագրությունը ամբողջովին նվիրված են «ՀՀ ֆինանսական պատասխանատվության իրավական հիմնախնդիրների» բացահայտումներին:

Ատենախոսության ձևավորումը համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից սահմանված պահանջներին:

Վերը նշվածը հիմք է տալիս եզրակացնել, որ Նազելի Գառնիկի Սուքիասյանի «Ֆինանսական պատասխանատվության իրավական հիմնախնդիրները Հայաստա-

նի Հանրապետությունում» վերտառությամբ դոկտորական ատենախոսությունը համապատասխանում է ԺԲ.00.02 – Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությանը:

Դոկտորական ատենախոսությունը ամբողջական գիտական հետազոտություն է, որի հիման վրա հեղինակ Նազելի Գառնիկի Սուքիասյանին կարելի է շնորհել իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

«Մխիթար Գոշ» Հայ-ռուսական միջազգային
համալսարանի կառավարման խորհրդի նախագահ,
«Իրավագիտության» ամբիոնի վարիչ՝
Իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Հ.Մ. Դերձյան**

Հ.Մ. Դերձյանի ստորագրությունը հաստատում եմ՝
«Մխիթար Գոշ» Հայ-ռուսական միջազգային համալսարանի ռեկտոր՝
մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վ. Բրուտյան